ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-20-9/25-2 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 22.05.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչության պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սադոյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 29.01.2020թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-20-9/25-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 50,386,996 (հիսուն միլիոն երեք հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչությունը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ար-Մեդիկա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բարեկամության 5	ՀՀ, ք. Երևան, Լենինգրադյան 23/11,92 տարածք
ՀՀ ՖՆ գանձարանային վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 900011433125	հ/հ 15700230186700100
ՀՎՀՀ 02522167	ՀՎՀՀ 01268548
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Ա. ՍԱԴՈՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-9/25-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումները ըստ 2020թ. եռամսյակների
						երրորդ եռամսյակ
8	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջեր մինիմալ անհրաժեշտ գործիքների հավաքով	լրակազմ	1.0	25,195,000.00	25,195,000.00	1
9	Ողնաշարի պարանոցային հատվածի կորպեկտոմիայից հետո ողերի մարմինների պրոտեզավորման համար նախատեսված տիտանից ցանց (Mesh) կեյջերի հավաք իրենց 0 եւ 2,5 աստիճանի թեքությամբ հենակային օղերով: 9 անուն 45 կտոր	լրակազմ	1.0	11,970,000.00	11,970,000.00	1
10	Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով	լրակազմ	12.0	1,101,833.00	13,221,996.00	12
Ընդամենը					50,386,996	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ Նյութատեխնիկական ապահովման վարչության պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար-Մեդիկա» ՍՊԸ տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-9/25-2 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝					
				Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.
8	Երկկոմպոնենտ պարանոցային կեյջեր մինիմալ անհրաժեշտ գործիքների հավաքով	33141224/535	25,195,000.00	25,195,000.00	25,195,000.00	25,195,000.00	25,195,000.00	25,195,000.00	25,195,000.00
9	Ողնաշարի պարանոցային հատվածի կորպեկտոմիայից հետո ողերի մարմինների պրոտեզավորման համար նախատեսված տիտանից ցանց (Mesh) կեյջերի հավաք իրենց 0 եւ 2,5 աստիճանի թեքությամբ հենակային օղերով: 9 անուն 45 կտոր	33141224/536	11,970,000.00	11,970,000.00	11,970,000.00	11,970,000.00	11,970,000.00	11,970,000.00	11,970,000.00
10	Կիֆոպլաստիկայի համար նախատեսված բարձր խտության ցեմենտ, խառնման և ներարկման հիդրավլիկ համակարգով	33141224/539	13,221,996	13,221,996.00	13,221,996.00	13,221,996.00	13,221,996.00	13,221,996.00	13,221,996.00
Ընդամենը			50,386,996						

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ գնումների կառավարման պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ար-Մեդիկա» ՍՊԸ տնօրեն

Ա. ՍԱԴՈՅԱՆ